ՔԱՀԱՆԱՑԻՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցիչեալ գանձարանի նոր վարչութիւնը, մտնելով իւր պաշտօնի մէջ, որոշել է՝ 1, Խօջիվանքի գերեզմանատունը բարեկարգելու նպատակով, փակել նորա դռները և բանալ միմիայն յուղարկաւորութեան և այլ կարիքների ժամանակ։ Այդ նպատակով դռներին նշանակւում են պահապաններ։ 2, Շինել Խօջիվանքի յատակագիծը։ 3, Թուահատներ դնել չիրիմների վերայ. 4, Շաւիղներ շինել հանգստարանում երթևեկութեանց համար։ 5, Այբենական ցուցակ պահել հանգստարանում ննջեցեալների համար։ 6, Խօջիվանքում տեղի պակասութեան պատճառով դնել կից՝ 1300 սաժէն գետինը։ 7, շինել 3 դիակառք, որոնք վարձու կտրուեն ունևորներին, իսկ ձրի պիտի տրուին այն չքաւոր ննջեցեալների համար, որոնց համար քելեխ չեն շինելու և 8, բերել Եւրոպայից ննջեցեալը գերեզման իջեցնելու գործիք։

Գ. ՑԱՐՈՅԻ ԹՈՂԱԿԻ ԽՆԴԻՐԸ

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. գերաշնորհ Տէր-Գէորգ Սարքեպիսկոպոսի Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմէրէթի, հարազատի Մայր Աթոռոյս ողջունիւ յայտ առնեմք։

Ցայտնեցէք յարգելի հոգաբարձութեան ես կարդացի իրենց յայտարարութիւն որ գրած էին ուսուցիչ Նիկողայոս Ցարոյի մասին։ Բայց խիղճ և արդարութիւն պարտաւոր կացուցանեն զիս, որ իմ առաջի կոնդակ ամենայն ճշտութեամբ գործադրել տաք, նկատելով պ. Ցարոյի երկարամեայ աշխատութիւն ուսուցչական պաշտօնին ոչ միայն Ներսիսեան Դպրոցում այլ և Տփխիսու քանի դպրոցներ պաշտօն վարած է, որով եթէ ի միասին հաշուենք գրեթէ քսանևհինգ տարիէն աւելի կը լինի, ուստի արժանի է այս մշակ վարձու իւրումի